ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 2055-Ա/2 **10.11.2022 թ.**

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՋԱԶ ՆՎԱԳԱԽՄԲԻ «ԱՊՐՈՒՄ ԵՆՔ» ԽՈՐԱԳՐՈՎ ՀԱՄԵՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝ Արցախի պետական ջազ նվագախմբի «Ապրում ենք» խորագրով համերգի կազմակերպման նպատակով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել Արցախի պետական ջազ նվագախմբի «Ապրում ենք» խորագրով համերգի կազմակերպման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1168. Արվեստների ծրագրի» «11005. Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման համար (տող՝ «Աջակցություն այլ մշակութային միջոցառումների և ծրագրերի իրականացմանը») Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը (այսուհետ՝ նախարարություն) նախատեսված գումարներից հատկացնել 1500,0 հազար (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ՝ Արցախի պետական ջազ նվագախմբի «Ապրում ենք» խորագրով համերգի կազմակերպման ծախսերն ապահովելու համար:

3. Նախարարության ֆինանսաբյուջետային վարչության պետին՝

սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո 15-օրյա ժամկետում նախապատրաստել և նախարարության գլխավոր քարտուղարի ստորագրմանը ներկայացնել սույն հրամանի 2-րդ կետում նշված գումարը «Հայաստանի էստրադային ջազ նվագախումբ» պետական

ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնելու մասին պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

4. Նախարարության ժամանակակից արվեստի վարչության պետին՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մարտի 16-ի թիվ 343-Ա/2 հրամանին և կնքվող պայմանագրին համապատասխան իրականացնել պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման նկատմամբ հսկողություն, բովանդակային հաշվետվությունների ընդունման գործառույթներ:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ա. Խզմալյանին:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

X

Հավելված
ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարի
« » « » 2022 թ.
N -Ա/2 հրամանի

Ծ Ր Ա Գ Ի Ր

Արցախի պետական ջազ նվագախմբի «Ապրում ենք» խորագրով համերգի կազմակերպման

1	Կազմակերպության անվանում	«Հայաստանի էստրադային ջազ նվագախումբ» ՊՈԱԿ
2	Կազմակերպության գտնվելու վայր	Մ. Բաղրամյան 17, ք.Երևան, ՀՀ
3	Ծրագրի անվանում	«Ապրում ենք» խորագրով համերգ
3.1	Բովանդակություն	Նոյեմբերի 30-ին Արցախի պետական ջազ նվագախումբը համերգային ծրագրով հանդես կգա Ճարտարապետների միության դահլիճում: Համերգային ծրագիրը ընդգրկում է հեղինակային ստեղծագործություններ, նոր գործիքավորումներ, երաժշտական նոր ձևավորումներ, դասական ջազային համարներ: Համերգին կներկայացվեն մի քանի ստեղծագործություններ հայաստանցի երաժիշտների հետ համատեղ, ինչպես նաև նվագախումբը հանդիսատեսի դատին կհանձնի իր նոր տեսահոլովակը:
3.2	Նպատակ	Արցախի ջազ նվագախմբի գործունեության հանրայնացում, ներդրված նոր ծրագրի ներկայացում հայաստանյան ունկնդրին, համագործակցային, գործընկերային կապերի հաստատում, երիտասարդ կատարողներին փորձառության փոխանցում:
3.3	Անցկացման ժամկետ	30. 11. 2022 թ.
3.4	Անցկացման վայր	Հայաստան, Երևան, Հայաստանի ճարտարապետների միության դահլիճ
3.5	Ակնկալվող արդյունքներ	• Հայաստանցի ջազ երաժիշտների հետ համատեղ ստեղծագործական նոր ելույթների նախապատրաստում, • Համերգային նոր հարթակների ստեղծում:

3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	1 համերգ, 200 հանդիսատես